British Embassy Yerevan

UNDP
Empowered lives.
Resilient nations.

oxYGen

UKaid
from the British people

WOMEN IN POLITICS
ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ընտանեկան բռնության հիմնահարցերը Հայաստանում»
թեմայով

Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի հանդիպում

Օգոստոսի 22-ին Երևանում կայացավ ԱԺ-ՔՀԿ համագործակցության բաց հարթակի (այսուհետ՝ «Հարթակ») հերթական հանդիպումը, որտեղ ներկայացվեցին Ընտանեկան բռնության հիմնահարցերի վերաբերյալ առաջարկներ՝ ուղղված ոլորտի բարելավմանը:

Նախաձեռնությունն իրականացվում է «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՕքսԵՋԵՆ հիմնադրամի հետ համագործակցությամբ, Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ:

Հանդիպմանը մասնակից էին դարձել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ոլորտի փորձագետներ, պետական, միջազգային կառույցների գործընկերներ, ինչպես նաև Ազգային ժողովի պատգամավորներ՝ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը, «Իմ քայլը» խմբակցության պատգամավորներ՝ Գայանե Աբրահամյանը և Լուսինե Բաղալյանը, ովքեր և հավաքագրեցին ՔՀԿ ներկայացուցիչների կողմից արվող առաջարկները, որոնք վերաբերում էին Ընտանեկան բռնության հաղթահարմանն ուղղված պետական քաղաքականության բարեփոխմանը:

Հիմնական առաջարկների համառոտագիր

- Անհրաժեշտ է ներդնել ընտանեկան բռնության վիճակագրության միասնական հաշվառման համակարգ:

2019 թ. հունվարից հուլիս ամիսների ընթացքում գրանցվել է կնասպանության 11 դեպք. բռնարարը եղել է ամուսինը, զուգընկերը կամ եղբայրը:
Առկա է ընտանեկան բռնության իրական վիճակագրություն ունենալու խնդիր. հայտնի են այն դեպքերը, որոնք հասել են ոստիկանություն, դատարան, մինչդեռ հետազոտությունները փաստում են, որ իրական պատկերն առավել մեծ է:

- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» **ՀՀ օրենքում փոփոխությունների, լրացումների իրականացման անհրաժեշտություն**

Մասնավորապես առաջարկվեց.

- վերահսկող վարքագծի կիրառումը, որպես ընտանեկան բռնության տեսակի ներառման և քրեականացման անհրաժեշտություն
- հոգեբանական բռնության քրեականացման անհրաժեշտություն
- նախազգուշացման կիրառման անարդյունավետության խնդիր, այն չի ապահովում հետագա բռնության կանխարգելումը և որևէ կերպ չի երաշխավորում տուժողների անվտանգությունը:
- օրենքում հաշտեցման ընթացակարգի, տերմինի սահմանման վերանայում
- զուգընկերների միջև բռնությունը, որպես ընտանեկան բռնություն դիտարկելու անհրաժեշտություն

- **Օրենքը, որպես բռնության ենթարկված անձ չի դիտարկում երեխային,** ով անմիջականորեն ականատես է եղել բռնության կիրառմանը և/կամ կրել է այդ բռնության բացասական հետևանքներն իր վրա (անուղղակի զոհեր) երեխան՝ որպես բռնությունից տուժած անձ, չի ստանում իրավական պաշտպանություն և, գործնականում, հաճախ մնում է բռնարարի անմիջական ազդեցության տակ:

- Մանկական օմբուդսմենի ինստիտուտի անհրաժեշտություն

Մասնագիտացված օղակների բացակայություն, այդ թվում ոստիկանական համակարգում, դատարաններում, սոցիալական աշխատողների շրջանում հատուկ մասնագիտացված ստորաբաժանումների կարիք, որոնք **ունեն հմտություններ աշխատելու ընտանեկան բռնության ենթարկված անձանց,** այդ թվում նաև երեխաների հետ:

- **Դատարան դիմելու ընթացակարգերի վերանայման** անհրաժեշտությունը.
- Հնարավորություն ստեղծել ՔՀԿ-ներին՝ դիմելու դատարան՝ պաշտպանելու իրենց շահառուի իրավունքները
- Բողոքի բացակայության դեպքում հետաքննության իրականացման անհրաժեշտություն

- **Ուղղորդման կարգի վերանայման անհրաժեշտություն.**

Առկա է միջանկյալ մասնագիտացված օղակի ստեղծման անհրաժեշտություն, որն ի մեջ պետք է ներառի սոց. աշխատողների, հոգեբանների, բուժ. հաստատության ներկայացուցիչների: Այս կառույցը պետք է **միջանկյալ օղակ հանդիսանա բռնության ենթարկված անձի և ոստիկանության միջև:**

Առաջարկներ հնչեցին նաև **բռնարարի հետ աշխատանքի** անհրաժեշտության, **հարկադիր ամուսնության** դեպքերի քննման վերաբերյալ:

Հանդմանը արված առաջարկների մանրամասներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով:

Հարթակի հաջորդ հանդիպումը կկայնա սեպտեմբեր ամսին: Օրվա և ժամի հետ կապված լրացուցիչ նամակ կշրջանառվի: Բացի առանձին թեմայի քննարկմանը, անդրադարձ կկատարվի նաև նախորդ քննարկումների առաջարկներին, որոնք վերաբերում էին կանանց վերարտադրողական առողջության և ընտանեկան բռնության հաղթահարման հիմնահարցերին: